9 (91). ՔԱՎՈՐԸ

Թաքավորըմ կելլե լլին հետ պըտրտի կը, մե գեղըմ կէրթա։

Հասնին կը օրա, կըսե.— Էլ ո՞ւր էրթանք, ախըր մե դիշերըմ մեզի միսըվիր չեն առնե։

Էսոնք կէրթան մտնին կը մե տունըմ, հոդ կը մնան. կէրթան օդան օր նե կը մտնին, տեսնին կը օր տանը տիրոջը կնիկը ծոցվոր է։ Թաքավորը հասկնա կը օր էդ կնիկմարթը կոլըրթվի կը։

Թաքավորը լըլին կըսե.— Արի օդեցեն դուս էլլենք։

Էդ տանը տերն է չորան է։ Չորանը կելլե մտնի կը թե, այեմ կազատվի կը։ Թաքավորն ու լըլըն հարցնեն կը թե. «Մենք օր տեսանք կնկանը, էդոր համար դուս էկանք բակը, դու էն ըսե, կնիկդ ազատվա՞վ, թե չէ»։ Էս չորանը էրկու իրեք անքամ կէրթա քուքա, վերչի անքամին կըսե, թե հրպը՝ «Ազատվավ»։ Մանչ տղա էր ծնվե, էսոր ըշկիլուս կէնեն։

Թաքավորը լըլին կըսե թե.— Էս մարթն օր մեզի նես առավ, էդոր մանչ տղա էղավ, արի մենք քավոր ըլլինք։

Լըլըն կըսե.— Դու գիտես։

Թաքավորը կըլլի քավոր։ Թաքավորը չորնին կըսե.— Տղադ օր կը հասնի, հարսնոցն ու պսակին է ես տի քավոր ըլլիմ։

Տղան օր կըհասնի, հարը նիշանել կուզե։ Տղան ախչըկանըմ հետ սիրաարված կըլլի։ Էդ ախչըկանը հարն ու մարը չորնին տղին չեն հ'ուզե տալ։ Շատ օր կը տապկըտին, ախչիկը էլի չեն տա։ Թաքավորը չորնին միտքը կըյնի՝ «Ծո,— կըսե,— կեցի թաքավորին

շիտկիմ»։ Կէրթա թաքավորին կը գտնի, կըսե.— Հրպը չես ըսե, մ·նչս հասել է, հիմի ախչիկըմ կուզե, հրմը հարն ու մարը չեն տա։

Թաքավորը կըսե.— Ես կը նիշանեմ, ես եմ քավորը։

Թաքավորը քուքա ախչըկանը խոսկը կառնե, հարսնիք կէնե։ Թաքավորին ժողովուրթը կըսեն թե՝ «Էդ տղան մահանա պիտի»։

Թաքավորը կըսե.— Ը՛ռ, ես թաքավորը ըլլիմ ու էդոր մեռնելու թողնեմ. այեմ ո՛ր ջանավարը կրնը էդոր ուտե։

Էսոնք կերոնները կը վառեն սենյակին մեչը, հարս ու թաքվոր հոտ կը մնան, ղարաղոլնին է սենյակին բոլորն են։ Կպատահի օր իրար հետ էսոնք յըրընութուն կէնեն. կերոններեն մեկը վառի, վառի, հալի ջանավար կը դառնա ու էս մանչուն կուտե։ Կնիկը զարմանա կը, կուլա։ Էսիկ կուլա կը օրա, դուռը կը բանան, կայեն օր մոմերեն մեկը ջանավար է դառցե, կերել է։

Էդտեղ արթղ թաքավորը կըսե.— Ճակատագիրը սուտ բան չէ, ըսած էր՝ էղավ։